

Աննա Է. Հակոբյան
Երևանի պետական համալսարան
annahakobyan@ysu.am

ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ^{*}

Ամփոփում

Հոդվածը նվիրված է Պարույր Սևակի ստեղծագործությունների հայերեն և անգլերեն թարգմանությունների համարժեքությանն առնչվող խնդիրներին Դորա Սաքայանի բազմաշերտ և համակողմանի մոտեցմամբ, համատեքստի խորիմացությամբ, հմուտ վերլուծությամբ և թարգմանությամբ:

Թարգմանչի համար գեղարվեստական թարգմանությունը մարտահրավերներով լեցուն մի ուղի է, որը նրանից պահանջում է հեղինակի ստեղծագործական ողջ ճանապարհի ուսումնասիրություն, խոր ըմբռնում, բնագրի ոգու ընկալում և հետո միայն վերարտադրում սեփականը դարձած մտքի, զգացմունքների, հուզարտահայտչական ներաշխարհի և փորձառության վրա հիմնված ճշգրիտ արտահայտությամբ՝ բնագրի լեզվին և ոճին համապատասխան:

Գեղարվեստական թարգմանությունը համարժեքության հստակ սկզբունքներ չի կարող նախանշել: Թարգմանիչը պետք է կարողանա ձիշտ ընտրություն կատարել՝ այդպիսով հավատարիմ մնալով բնագրին և ընդառաջ գնալով թիրախային լեզվի ընթերցողին: Հաշվի առնելով, որ գեղարվեստական գրականության մեջ թարգմանաբանական խնդիրները բազմազան են և բազմաբնույթ, անչափ

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 27.05.2025:

կարևոր է ձիշտ և հստակ ռազմավարություն որդեգրել լուծումներ տալու համար: Հարցը պետք է դիտարկել իմացական հայեցակերպից, քանի որ տարբեր մշակույթներն ու լեզուները իմաստավորվում և կիսում են միևնույն իմացական հիմքը, կառուցում իրենց համակարգերը հասարակության համընդհանուր ճանաչողության դիրքերից:

Այսպիսով՝ համարժեքությանը վերաբերող ուսումնասիրությունները եղել և մնում են թարգմանաբանության առանցքային հարցերից մեկը, որին անդրադարձել և շարունակում են անդրադառնալ տարբեր լեզվաբաններ: Եվ չնայած արդեն իսկ կատարված աշխատանքներին և ունեցած ձեռքբերումներին՝ այն շարունակում է մնալ որպես կարևոր ուսումնասիրության խնդրո առարկա:

Բանալի բառեր – համարժեք, փորձառություն, ուսումնասիրություն, մշակույթ, ոճ, վերլուծություն, գեղարվեստական գրականություն, համակարգ, հասարակություն:

Anna E. Hakobyan
PhD in Philology

EQUIVALENCE IN LITERARY TRANSLATION

Abstract

The article is dedicated to the examination of the issues related to the equivalence of the Armenian and English translations of Paruyr Sevak's literary compositions translated by Dora Sakayan whose multi-layered and comprehensive approach, deep understanding of the context and the skillful analysis make her translation remarkable.

For a translator, literary translation is a challenging path that requires studying the author's entire creative path, deeply understand, perceive the very spirit of the original text and only then reproduce its most accurate expression of it based on her own thoughts, feelings, emotional-expressive inner world and experience in accordance with the language and style of the original.

Literary translation cannot set clear principles of comparison. The translator should make the right choices, thus remaining faithful to the original and reaching out to the target language reader.

Considering that translational problems in fiction are diverse and multifaceted, it is extremely important to adopt a correct and clear strategy for providing solutions.

The issue should be viewed from an epistemological perspective as different cultures and languages make sense of and share the same epistemological foundation, building their systems from the standpoint of the general cognition of the given society.

Thus, the problem of equivalence and its study have been and remain the key issues in translation studies to which various linguists have addressed and continue to explore. And despite the work already done and the achievements made, it remains a relevant object of study.

Keywords – equivalent, experience, study, culture, style, analysis, fiction, system, society.

Анна Э. Акопян

Кандидат филол. наук

ЭКВИВАЛЕНТНОСТЬ В ЛИТЕРАТУРНОМ ПЕРЕВОДЕ

Резюме

В данной статье рассматриваются вопросы эквивалентности армянских и английских переводов произведений Паруйра Севака взяв за основу перевод Доры Сакаян, ее многослойный и комплексный подход к оригиналу, понимание и искусный анализ контекста.

Для переводчика художественный перевод - это сложный путь, требующий от него изучения всего творческого пути автора, глубокого понимания, восприятия духа оригинала и лишь затем максимально точного его выражения, основанного на собственных мыслях, чувствах, эмоционально-экспрессивном внутреннем мире и опыте переводчика, в соответствии с языком и стилем оригинала.

При художественном переводе нельзя устанавливать четкие принципы сравнения. Переводчик должен уметь делать правильный выбор, чтобы оставаться верным оригиналу и достучаться до читателя на целевом языке. Учитывая, что проблемы перевода в художественной литературе многообразны и многогранны, крайне важно выработать правильную и ясную стратегию их решения.

Эту проблему следует рассматривать с эпистемологической точки зрения, поскольку разные культуры и языки осмысливают и разделяют одну и ту же эпистемологическую основу, выстраивая свои системы с точки зрения общего познания общества.

Таким образом, проблема эквивалентности и ее изучение были и остаются одними из ключевых вопросов переводоведения, к которым обращались и продолжают обращаться различные лингвисты-переводчики. И несмотря на уже проделанную работу и достигнутые успехи, переводоведение продолжает оставаться важным предметом изучения.

Ключевые слова – перевод, сложный процесс, эквивалент, опыт, исследование, культура, стиль, анализ, художественная литература, система, общество.

Մուտք

Համարժեքության խնդիրը որպես գեղարվեստական թարգմանության առանցքային հասկացություն տարբեր ժամանակներում տարբեր կերպ է արժևորվել: Հետևապես, գեղարվեստական թարգմանության համարժեքության խնդիրը նախ և առաջ պայմանավորված է թիրախային լեզվի ընթերցողի վրա գեղագիտական և հուզարտահայտչական այնպիսի ազդեցություն թողնելով, որը համարժեք կլինի բնագրի ընթերցողի ընկալմանը: Այն սուկ վերակոդավորում չէ:

Գեղարվեստական թարգմանությունը թարգմանչից պահանջում է հեղինակի ստեղծագործական ճանապարհի ուսումնասիրություն, խոր ըմբռնում, բնագրի ոգու ընկալում և վերարտադրություն սեփականը դարձած մտքի, զգացմունքների, հուզարտահայտչական ներաշխարհի և փորձառության վրա հիմնված ամենաճշգրիտ արտահայտությունը՝ բնագրի լեզվին և ոճին համապատասխան (Bell, 1993, 57, House, 2009, 88):

Եթե հիմք ընդունենք այն փաստը, որ լեզուն իր զարգացման տարբեր գոյավիճակներում միշտ ձգտել է առավելագույն համարժեքության լեզվական արտահայտչամիջոցների և հասկացական աշխարհի միջև, ապա հմուտ և արհեստավարժ թարգմանչից պահանջվում է լեզվին գրեթե բացարձակորեն տիրապետելը:

Եթե դիտարկենք թարգմանությունը՝ որպես լեզուների միջնակության հաղորդակցության գործընթաց, ապա պետք է արձանագրենք, որ վերջինիս գլխավոր նպատակն է ապահովել տարբեր ազգամշակու-

թային պատկանելության հաղորդակցվողների փոխըմբռնումը, քանի որ յուրաքանչյուր բառիմաստ ինքին ենթադրում է տվյալ ժողովրդի լեզվամտածողության կարծրատիպերը:

Ուստի պատահական չէ, որ անթարգմանելիության և համարժեքության խնդիրները քննվում են հենց գեղարվեստական թարգմանության առնչությամբ, որը բովանդակության և ձևի հստակ և ճշգրիտ ընկալման մի բարդ գործընթաց է (Newmark, 1988, 82):

Այսպիսով, այս հոդվածի նպատակն է քննել և վերլուծել Պարույր Սևակի ստեղծագործությունների հայերեն և անգլերեն թարգմանությունների և համարժեքության խնդիրները Դորա Սաքայանի թարգմանությամբ: Հիշարժան է և խոր ակնածանքի արժանի նրա թարգմանչական ներդրումը Պարույր Սևակի ստեղծագործությունների թարգմանության մեջ, որն էլ ուսումնասիրության նյութ է ծառայել տվյալ հոդվածի համար՝ նրա բազմաշերտ և համակողմանի մոտեցմամբ, համատեքստի խորիմացությամբ և հմուտ վերլուծությամբ, որը, բացի տաղանդից, անշուշտ, պահանջում է նաև համապատասխան հմտություններ:

1. Գեղարվեստական թարգմանության և գեղարվեստական համարժեքության որոշ խնդիրների մասին

Համարժեքության տեսակներից մեկը, որին կանդրադառնանք Պարույր Սևակի հայերեն և անգլերեն համարժեք թարգմանություններում բացարձակ համարժեքության խնդիրն է, որը ենթադրում է հստակ և նշանակության առումով բովանդակային վերարտադրություն սկզբնաղբյուր լեզվից թիրախ լեզու: Ընդհանուր համարժեքները հիմնականում նույնաբնույթ են իրենց լեզվական նկարագրով, ինչը նշանակում է, որ եթե սկզբնաղբյուր լեզվում կա մեկ բառային արտահայտություն, ապա թիրախային լեզվում համարժեքը կարտահայտվի մեկ բառով, ինչպես, օրինակ՝ *գերություն – captivity, մեղություն – maternity, ծերություն – senility, սեր – love* (P. Sevak, *First Riddle*):

Ինչպես տեսնում ենք, վերը նշված օրինակները խոսում են այն մասին, որ թե՛ անգլերեն և թե՛ հայերեն համարժեքները արտահայտված են մեկ բառով, ինչը նշանակում է, որ բացարձակ համարժեքությունը պահպանված է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնաղբյուր և թիրախային լեզուների միջև նշանակության առումով բովանդակությունը ընդգրկում է և համարժեք: Ավելին, թեև

անգլերենը և հայերենը տիպաբանական տեսանկյունից տարբեր լեզուներ են, նրանք տարբեր են նաև լեզվամշակութային դիտանկյունից: Քիչ չեն այն դեպքերը, երբ սկզբնաղբյուր լեզվում մենք ունենում ենք մեկ բառ, սակայն թիրախ լեզվում նույն միտքն արտահայտվում է մի քանի բառերով: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ անգլերենը վերլուծական լեզու է, մինչդեռ հայերենը՝ համադրական քերականական կառուցվածք ունեցող լեզու: Վերը նշվածը կարելի է լուսաբանել հետևյալ օրինակներով՝

Մենք մեզ ոչ որից չենք գերադասում... – We do not put ourselves above anyone...

Մահն է մեզ սիրահարվել... – With us death had fallen in love...

Ջանացել ենք մենք ամենքի համար... – We have joined efforts for everyone...

Պարզապես Դավիթն այստեղ է կռվել... – Simply David has indeed fought right here...

Եվ ինչու պիտի չհպարտանանք... – Why should we not feel pride about that ...

(P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Բերված օրինակներն էլ վկայում են այն մասին, որ սկզբնաղբյուր լեզվում, այն է՝ հայերենում նշված մեկ բառը թիրախային լեզվում՝ անգլերենում կարող է թարգմանվել երկու և ավելի լեզվական միավորներով՝ *շատրանսնք... – become many...* (*P. Sevak, We are Few but We are Called Armenians*), *խելոքանանք – grow wise* (*P. Sevak, All at Once*), *քանդվել – to be torn down* (*P. Sevak, All at Once*):

Այս առումով տեղին է մեջբերել Արթուր Շոպենհաուերի խոսքերը. «Ոչ բոլոր բառերն ունեն իրենց համարժեքները մյուս լեզվում: Այսպիսով, ոչ բոլոր հասկացույթները, որ արտահայտված են մի լեզվի բառերով, բացարձակ նույնն են մյուս լեզվում: Դիտարկենք այլ օրինակներ, որտեղ համարժեքության խնդիրը պահպանված է բովանդակային տեսանկյունից, որտեղ ընդգծվում է հիմնական գաղափարը՝

ձայնիկ – little voice (*P. Sevak, First Riddle*)

աղջկական քո նստանքով – real maiden grace (*P. Sevak, I am not Late*)

ուշացել եմ քո գարունից – I am late for your life's spring (*P. Sevak, I am not Late*)

սանդրի նման – like a fine comb (*P. Sevak, In Passing by*)

ցույց է ցույցիս իր ուժն արդեն – to show its real force (*P. Sevak, In Passing by*)

հավատում են արդարության – I believe in right and justice (*P. Sevak, In Passing by*)

Երբեմն միևնույն միտքը թարգմանիչը մեկնաբանում է այլ լեզվական արտահայտչամիջոցներով, որտեղ նա կիրառել է ձկուն համարժեքության սկզբունքը (dynamic equivalence): Այս դեպքում ուշադրության կենտրոնում թիրախային լեզվի տեքստն է, և թարգմանչի բուն նպատակը ոչ թե պարզապես նույնությամբ այն թարգմանելն է, այլ բարձրորակ թարգմանություն ստանալը: Դիտարկենք հետևյալ մեջբերված օրինակները՝ *հուսահատվում եմ* ստորոգյալը թարգմանվում է անգլերեն երեք տարբերակներով՝

- ա. *Հուսահատվում եմ ինքս ինձանից* – *I feel desperate over my own self.*
 բ. *Հուսահատվում եմ նաև այն քանից* – *Despair overcomes me also when I reflect.*
 գ. *Պիպի դեռ հուսահատվեմ ինքս ինձանից* – *I will despair over my own self.*
 (P. Sevak, *Moments of Dispair*)

Հատկանշական է, որ *հուսահատվում եմ ինքս ինձանից* – *I feel desperate over my own self* իր հուզաարտահայտչական երանգավորմամբ համեմատաբար թույլ է վերը նշված մյուս տարբերակներից, օգտագործվում է ամենասկզբում և վկայում է հեղինակի հոգևոր վիճակի մասին: Մինչդեռ *Despair overcomes me...* շատ ավելի ընդգծված է, քանի որ *overcomes* ստորոգյալը ենթադրում է, որ հույսի նշույլ անգամ չի մնացել, երբ հեղինակը հաշվի է առնում այն փաստը, թե դեռ քանի անգամ պետք է հուսահատվի ինքն իրենից: Ինչ վերաբերում է *I feel desperate...* և *I will despair ...* կառույցներին, ապա պետք է նշենք, որ եթե առաջինը ցույց է տալիս ժամանակավոր վիճակ, ապա երկրորդը նշանակում է հեղինակի հայտնվելը և մշտապես մնալը հուսահատ վիճակում:

Օրինակ՝ «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության մեջ թարգմանիչը *բարձրիկ (high)* բառը թարգմանել է *clear*, որն օգտագործվում է որպես էպիտետ՝ Սևանա լիճը գեղարվեստականորեն բնորոշելու համար: Նմանատիպ փոխարինումը պայմանավորված է, անշուշտ, համատեքստով և նրանից բխող պահանջներով: Նշված օրինակում թարգմանիչը վերստեղծել է բնագրի արժեքը՝ փորձելով ընթերցողի մտապատկերում ստեղծել մի պատկեր՝ երկնքի արտացոլումը լճի մակերևույթի վրա: Հետևապես, լճի պարզության և մաքրության իմաստը տվյալ համատեքստում ավելի տեղին է, ինքնին խոսուն և իմաստային նկարագրով հարուստ, քան բարձր լինելու հասկացությունը: Դիտարկենք օրինակը՝

*Եվ որ այսպեղ է՝ բարձրիկ Սևանում, երկինքն իր ձիշտ պայծենը հանում...
And that it is right here on the clear Sevan that the sky could make its exact
dublicate...*

(P. Sevak, We are Few but We are called Armenians)

Մեկ այլ ուշագրավ օրինակ է *man* բառի փոխարինումը *bird* բառով: Անկասկած, *to make man from clay* իմաստաբանական տեսանկյունից ավելի արտահայտիչ է և ոճական առումով ավելի նշույթավորված, քան *to make bird from clay* (շինել թռչուն կավից): Թարգմանիչն այստեղ հավատարիմ է մնացել բնագրին՝ պահպանելով սկզբնաղբյուր և թիրախ լեզուների պատմական և մշակութային առանձնահատկությունները և ընդգծելով հայկական ձեռքերի վարպետությունն ու կատարելությունը, քանի որ ինքնին ենթադրելի է, որ *մարդ սարքելը* ավելի դժվար գործ է, քան *թռչուն* սարքելը:

Պարզապես գիտենք ... քարից շինել ձուկ և թռչուն՝ կավից...

Simply we know ... how to make fish from stone.. how to make man from clay...

(P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Այսպիսով, հարկ է նշել, որ գեղարվեստական թարգմանությունը համարժեքության հստակ սկզբունքներ չի կարող նախանշել: Թարգմանիչը պետք է ձիշտ ընտրություն կատարի՝ այդպիսով հավատարիմ մնալով բնագրին և ընդառաջ գնալով թիրախային լեզվով ընթերցողին:

2. Համարժեքության պահպանումը՝ միջմշակութային տեղեկությ

Թարգմանությունը, մասնավորապես գեղարվեստական գրականության թարգմանությունը միջմշակութային հաղորդակցման յուրօրինակ մի միջոց է լեզվական, հոգևոր, գաղափարական, գիտական և փիլիսոփայական դիտանկյուններից լեզվի հարստացման սկզբնաղբյուր (Lewis, 2003, 37): Հաշվի առնելով, որ գեղարվեստական գրականության մեջ թարգմանաբանական խնդիրները բազմազան են և բազմաբնույթ, անչափ կարևոր է ձիշտ և հստակ ռազմավարություն որդեգրել լուծումներ տալու համար: Ստորև բերված օրինակներում կդիտար-

կենք դեպքեր, որտեղ թարգմանիչը լրացուցիչ բառ կամ նախադասություն է ներմուծել համապատասխան հասկացական և բովանդակային տիրույթում, որպեսզի տեղեկատվությունը ձգգրիտ կերպով մատուցվի ընթերցողին, և շեշտը դրվի հեղինակի ակնարկած հիմնական հասկացության վրա (Gillies, 2005, 37, Setton, 1999, 52): Օրինակ՝

Պարզապես մենք մեր դարավոր կյանքում, երբ եղել ենք շատ ու եղել կանգուն, դարձյալ չենք ձնշել մեկ ուրիշ ազգի, ոչ ոք չի Կուժել զարկից մեր բազկի:

Simply in our lives of centuries long, when we were many and we were strong, even then we did not oppress any nation. See, centuries have come and centuries have passed. Yet, over no one have we become tyrants.

(P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Ինչպես տեսնում ենք վերը նշված մեջբերումից, թարգմանիչը մի ամբողջական նախադասություն է ավելացրել՝ *See, centuries have come and centuries have passed*: Ակնհայտ է, որ դրանով նա ցանկանում է ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնել այն փաստի վրա, որ նույնիսկ իրենց հզորության պահին հայերը երբևէ բռնակալ չեն դարձել որևէ մեկի նկատմամբ:

Հարկ է նշել, որ տեղեկատվության ներմուծումն իրականացվում է նաև կրկնության միջոցով, որն ուղղված է տվյալ բառիմաստը ընդգծելուն: Օրինակ՝ *մահանալ* բայը թիրախային լեզվի՝ անգլերեն թարգմանության մեջ *This is a way... to die, and to die bit by bit ... (P. Sevak, This is not a Way to Love)* ու կրկնվում է երկու անգամ: Նշենք նաև, որ ըստ անհրաժեշտության, բացի կրկնությունից թարգմանիչը կարող է նաև ավելացնել հավելյալ բառ, որը պայմանավորված է ոչ միայն ոճական երանգը, այլև թիրախային լեզվի տիպաբանական առանձնահատկությունները պահպանելու նախապայմանով: Ինչպես, օրինակ, հետևյալ նախադասության մեջ՝ *Առեք ձեռքերս, խնդրեմ կտրեցեք...* անգլերեն թարգմանվել է որպես *Take away my hands, please cut them (P. Sevak, This is not a Way to Love)*, որտեղ *them-ը* թարգմանչի կողմից ներմուծված լրացուցիչ բառ է: Ակնհայտ է, որ եթե նշված դերանունը չավելանար, ապա *cut* բայը կլիներ երկիմաստ, ինչպես նաև իմաստային և քերականական տեսանկյուններից ոչ լիարժեք:

Ինչ վերաբերում է փոխաբերությանը, ապա նշենք, որ թարգմանական անթարգմանելիության ամենավիճահարույց հարցերից մեկն էլ

փոխաբերության թարգմանությունն է: Այստեղ հարկ է շեշտել, որ կարևոր է թարգմանչի կողմից վերնշանային իմաստի ճիշտ ընկալման գործոնը: Դրանից հետո միայն պետք է դիտարկել համարժեքության հարցը թիրախային լեզվում: Հնուտ թարգմանիչը, անշուշտ, հարցը կդիտարկի իմացական հայեցակերպից, քանի որ տարբեր մշակույթներ և լեզուներ իմաստավորվում և կիսում են միևնույն իմացական հիմքը, կառուցում իրենց համակարգերը հասարակության համընդհանուր ճանաչողության դիրքերից:

Փաստ է, որ փոխաբերությունը՝ որպես մտածողության և երևակայական գործընթացի պատկեր, բարդ է վերարտադրել (Snell-Hornby, 1995, 21): Թարգմանիչը պետք է զինված լինի թե՛ սկզբնաղբյուր և թե՛ թիրախային լեզվի լեզվամշակութային առանձնահատկություններով: Սակայն մարդկային մտածողության միասնությունը ենթադրում է նաև պատկերների հարացույցի համընդհանուր բնույթը՝ նվազ ազգամշակութային տարբերություններով: Այնուամենայնիվ, եթե լեզվամշակութային առանձնահատկությունները նույնաբնույթ չեն թիրախ լեզվի հետ և չեն կիսում ընդհանրություններ, ապա այն դառնում է թարգմանչին ուղղված մեկ այլ մարտահրավեր (Латышев, 2000, 53): Դիտարկենք մի քանի օրինակներ՝

Ու երբ ցուրտը երկրասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն...

And when youthful cold starts to show its real force ... (P. Sevak, In Passing by)

Հոբուրդող բարակ քամին...

The sniffing light wind (P. Sevak, In Passing By)

Հոգևոր ցուրից ...

From spiritual coldness... (P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Նշխար՝ սրտից – ... a sacrament from the heart itself...

(P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Պարզապես մահն է մեզ սիրահարվել...

Simply with us death had fallen in love...

(P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Մենք գիտենք միսալ...

We know how to smoke... (P. Sevak, We are Few but We are Called Armenians)

Անքնությունն անվերջ հյուսում է ցանց մի խիտ...

Insomnia weaves an impenetrable net ... (P. Sevak, Love)

Ինչպես տեսնում ենք, վերը նշված օրինակներում փոխաբերությունները թարգմանվել են բառացիորեն, քանի որ թարգմանիչն ակնհայտորեն ցանկացել է հնարավորինս հավատարիմ մնալ բնօրինակին: Սակայն միշտ չէ, որ այս սկզբունքը հնարավոր է պահպանել: Երբեմն թարգմանիչը ստիպված է լինում շրջանցել այն՝ վերափոխել կամ վերածնակերպել փոխաբերությունը՝ միաժամանակ փորձելով պահպանել տվյալ լեզվական միավորի հիմնական իմաստը: Օրինակ՝ *որ փուշ կարոտը քեզ ծվարում է...* հայերենից անգլերեն թարգմանվել է *that a strong nostalgia gnaws at your heart...* (P. Sevak, *First Love*): Ինչպես երևում է օրինակից, *փուշ կարոտը*-ը թարգմանվել է որպես *a strong nostalgia*. Մյուս կողմից՝ *քեզ ծվարում է...* թարգմանվել է *as gnaws at your heart*.

Կախված իրադրությունից՝ գեղարվեստական թարգմանության մեջ երբեմն նաև լինում են այնպիսի դեպքեր, երբ տվյալ լեզվական միավորը միկրոհամատեքստում նկարագրվում է որպես փոխաբերություն, մինչդեռ այլ լեզվական միավորների միջակայքում վերափոխվում է փոխաբերական նմանության (similie): Բերված օրինակները ցույց են տալիս քննարկվող հարցը՝

Երբ վերջալույսն է մխրձվում ամպերի մեջ սասնորի նման

When twilight sinks among the clouds like a fine comb ... (P. Sevak, In Passing by)

Շնիկի պես կանգ է առնում ...

And the sniffing light wind stands still like a puppy ... (P. Sevak, In Passing by)

Ինչպես տեսնում ենք, *sinks* – *մխրձվում է* բայը միկրոհամատեքստում *twilight* – *վերջալույս* բառի հետ միասին դառնում է փոխաբերություն, որը հանգեցնում է փոխաբերական նմանության՝ *սասնորի նման*: Ասվածը վերաբերում է նաև հետևյալ օրինակին՝ *The sniffing light wind stands still* փոխաբերությունը, որը *շնիկի պես* – *like a puppy* արտահայտության հետ միասին դառնում է փոխաբերական նմանություն:

Այսպիսով՝ համարժեքության խնդիրը եղել և մնում են թարգմանաբանության առանցքային հարցերից, որին անդրադարձել և շարունակում են անդրադառնալ տարբեր լեզվաբան-թարգմանիչներ:

Եզրակացություններ

Պարույր Սևակի բանաստեղծությունների բնագիր, ինչպես նաև անգլերեն թարգմանություններից մեր կողմից ընտրված ստեղծագործությունների համեմատական ուսումնասիրությամբ և մի շարք օրինակներով, թե՛ տեսական և թե՛ գործնական տեսանկյունից մեր դիտարկումները և մանրակրկիտ վերլուծությունները մեզ հանգեցրել են հետևյալ երկու եզրակացություններին:

Գրական-գեղարվեստական թարգմանության դժվարություններից մեկը պայմանավորված է թարգմանության բուն գործընթացով: Լեզուների միջև լեզվական և մշակութային անհամաչափությունների պատճառով թիրախային լեզվի տարբերակը երբեք չի կարող լիովին նույնական լինել սկզբնաղբյուր լեզվի տարբերակին: Հետևաբար, համարժեքությունը չպետք է սահմանվի որպես բացարձակ նույնականություն, այլև պետք է դիտարկել այն որպես սկզբնաղբյուր և թիրախային լեզվի միջև բովանդակային և իմաստային տեսանկյունից հարաբերականորեն համարժեք:

Սկզբնաղբյուր լեզվում օբյեկտիվ մեկնաբանությանը հասնելու համար թարգմանիչը պետք է լիովին տիրապետի սկզբնաղբյուր լեզվի բուն նյութին, հեղինակի կողմից գործածված այն լեզվական պայմանականություններին, որոնցով պայմանավորված է իր ընթերցողի կամքի վրա գեղագիտական ազդեցություն գործադրելու նրա հրամայականը: Նման մոտեցումն օգնում է թարգմանչին հասնել ստեղծագործության մեջ հեղինակի մտադրության օբյեկտիվ մեկնաբանմանը և հետևաբար, որոշել սկզբնաղբյուր լեզվի այն նշույթավորված տարրերը, որոնք փոխանցում են հեղինակի մտադրությունը և որոնք թարգմանիչը պետք է հաշվի առնի որպես գեղարվեստական տվյալ թարգմանության մեջ նշույթավորված միավորներ:

Ինչ վերաբերում է ոճական հավատարմությանը և ձկունությանը, ապա պետք է հիմք ընդունել, որ գեղարվեստական գրականության ոճը «արտադրվում» է հեղինակի կողմից և վերծանվում ու մեկնաբանվում ընթերցողի կողմից: Ուստի, թարգմանիչը որպես ընթերցող և սկզբնաղբյուր լեզվի հաղորդագրությունը վերծանող, դինամիկ դեր ունի թարգմանության ողջ գործընթացում: Նրա ակտիվ դերը՝ ձևի և բովանդակության, բովանդակության և հեղինակի մտքի միջև նրան տալիս է համարժեք թարգմանությանը հասնելու կարողություն: Նա պետք է տարբերակի և գործածի այնպիսի ոճական հնարներ, որոնք

փոխանցում են հեղինակի մտադրությունը սկզբնաղբյուր լեզվով և հետևաբար, պետք է պահպանվեն թարգմանության մեջ, իսկ նրանք, որոնք երկրորդական են և կարող են բաց թողնվել և փոփոխվել՝ այլ լեզվառձական հնարներով:

Այսպիսով, համարժեք գրական թարգմանություն է համարվում այն թարգմանությունը, որը լեզվառձական տեսանկյունից համապատասխան է սկզբնաղբյուր լեզվի գրական նորմերին: Հետևաբար գեղարվեստական գրականության թարգմանության մեջ ոչ միայն առանցքային և կարևոր դերակատարում ունեն լեզվական միավորների կիրառման ճշգրտությունն ու նույնականությունը, այլ նաև բնագրին հավատարիմ մնալը:

Հանգել ենք նաև այլ եզրակացությունների: **Պարույր Սևակի պոեզիայի բնագրի և անգլերեն թարգմանության բառային համարժեքներից մեկը երկու լեզուներում մեկ բառով արտահայտված բացարձակ համարժեքությունն է:** Լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ սկզբնաղբյուր լեզվում ունենք մեկ բառ, իսկ թիրախ լեզվում նույն միտքն արտահայտվում է բազմաբառ արտահայտություններով:

Չնայած այն հանգամանքին, որ թարգմանություններում տեղեկատվությունը սովորաբար մնում է անփոփոխ, թարգմանիչը երբեմն ներմուծում է լրացուցիչ իմաստային միավոր կամ նույնիսկ նախադասություն, որն առավել ընդգծում է հիմնական միտքը:

Փոխաբերությունները թարգմանվում են բառացի, քանի որ թարգմանիչն ակնհայտորեն ցանկանում է հնարավորինս հավատարիմ մնալ բնօրինակին: Երբեմն լինում են այնպիսի դեպքեր, երբ տվյալ լեզվական միավորը միկրոհամատեքստում նկարագրվում է որպես փոխաբերություն, մինչդեռ այլ լեզվական միավորների հետ համատեղ վերածվում է փոխաբերական նմանության:

Աննա Է. Հակոբյան – զբաղվում է թարգմանաբանական խնդիրների ուսումնասիրությամբ: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են իրավալեզվաբանության և գեղարվեստական գրականության տեսության հիմնահարցերն ու թարգմանաբանական խնդիրները: Հեղինակ է 3 մենագրության, 2 ուսումնասօժանդակ ձեռնարկների և 12 գիտական հոդվածների:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Bell R., (1993).** Translation, Translation Theory and Practice. London, New York: Longman:
2. **Gillies A.,(2005).** Note-Taking for Consecutive Interpreting - A Short Course. Manchester, St. Jerome Publishing:
3. **Holmes J.,(1994).** Translated Papers on Literary Translation and Translation Studies, Amsterdam and Atlanta, 1994:
4. **Hofstede G.,(2003).** Cultures and Organizations, London, Harper Collins, 2003:
5. **House J., (2009).** Translation. New York: Oxford UP:
6. **Lewis R.D., (2003).** When Cultures Clollide, London, NB Books:
7. **Lyons J., (1995).** Linguistic Semantics: An Introduction. Cambridge: Cambridge University Press:
8. **Montgomery S.L., (2000)** Science in Translation: Movement of Knowledge through Cultures and Time. Chicago: University of Chicago Press:
9. **Newmark P., (1988).** A Textbook of Translation, New York & London: Prentice Hall:
10. **Ray M.,(2008).** Studies in Translation. Atlantic Publishers and Distributors, (P) Ltd:
11. **Setton R., (1998).** Meaning Assembly in Simultaneous Interpretation.// Interpreting. International Journal of Research and Practice in Interpreting 3(2):
12. **Snell-Hornby M., (1995).** Translation Studies: An Integrated Approach. Amsterdam: John Benjamins:
13. **Tytler A.,(2007).** The Translation Studies Reader:
14. **Влахов С., Флорин С., (2006).** Непереводимое в переводе./Монография. – М.: Валент:
15. **Латышев Л.К., (2000).** Технология перевода. – М.: НВИ-Тезаурус

Bibliography (Latin Script)

1. **Vlakhov, S., Florin, S. (2006).** *Neperevodimoe v perevode. Monografiya.* – М.: Valent. (in Russian)
2. **Latyshhev, L. K. (2000).** *Tekhnologiya perevoda.* – М.: NVI-Tezaurus. (in Russian)